

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Մասնագիտության դասիչը և անվանումը	0811.05.5 <<Հողաշինարարություն>>
Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	Տեխնիկ - հողաշինարար
I. Դերը	Կազմակերպել և/կամ կառավարել հողաշինարարական աշխատանքները գյուղացիական տնտեսություններում, ձեռնարկություններում, շինարարական կազմակերպություններում կամ դրանց ստորաբաժանումներում:
II. Խնդիրների բնագավառները	
Խնդիրների բնագավառ 1. Հողաշինարարական աշխատանքների համար անհրաժեշտ ելակետային տեղեկությունների հավաքում, խմբավորում, մշակում, ամփոփում	
Աշխատանքային գործընթացը	<ol style="list-style-type: none"> 1. Ըստ հողաշինարարական աշխատանքների ուղղությունների և տեսակների տեղեկությունների կազմի և դրանց ստացման աղբյուրների հստակեցում: 2. Հատակագծաքարտեզագրական, հողագիտական, կադաստրային, իրավական նյութերի ձեռք բերում: 3. Բնակլիմայական, տնտեսական, հիդրոտերկրաբանական և հողային պայմանների վերաբերյալ տեղեկատվության ձեռք բերում: 4. Դաշտային այցելություն, ելակետային տվյալների ճշգրտում: 5. Հավաքագրված տվյալների խմբավորում, մշակում, վերլուծություն և ամփոփում: 6. Տեղեկությունների ամբողջականության ստուգում:
Կատարման չափանիշներ	<p>ա. ըստ աշխատանքների ուղղությունների և խմբերի տեղեկությունների կազմը ամբողջական է,</p> <p>բ. տեղեկությունների ձեռք բերման աղբյուրները հիմնավոր են,</p> <p>գ. աշխատանքների համար պահանջվող իրավական փաստաթղթերի կազմը լրիվ ձևավորված է,</p> <p>դ. տեղեկությունները խմբավորված են ըստ հետագա օգտագործման կարիքների,</p> <p>ե. տեղեկությունների ամփոփման արդյունքում ստացված են անհրաժեշտ ամբողջական տվյալներ,</p> <p>զ. տեղեկությունները ձևավորված են պահանջվող ձևաչափով,</p> <p>է. ըստ անհրաժեշտության տեղեկությունների առանձին խմբերը ներկայացվել է հաստատման:</p>

<u>Խնդիրների բնագավառ 2.</u>	Կատարել հողերի և անշարժ գույքի չափագրում
Աշխատանքային գործընթացը	<p>1. Հողերի և անշարժ գույքի հաշվառում ըստ սեփականության սուբյեկտների, նպատակային և գործառնական նշանակության:</p> <p>2. Հողերի և անշարժ գույքի, գծային կառուցվածքների հանույթագրում:</p> <p>3. Հողերի և անշարժ գույքի չափագրում:</p>
Կատարման չափանիշներ	<p>ա. հողերի և անշարժ գույքի չափագրման կիրառվող մեթոդաբանությունը ճիշտ է,</p> <p>բ. հողերի և անշարժ գույքի չափագրման ցուցանիշների կազմը ամբողջական է,</p> <p>գ. չափագրման գործողությունները ճիշտ է կատարվել,</p> <p>դ. չափագրման արդյունքները ճիշտ է փաստաթղթավորվել,</p> <p>ե. ըստ հետագա օգտագործման անհրաժեշտության չափագրման արդյունքները նախապատրաստված է:</p>
<u>Խնդիրների բնագավառ 3.</u>	Կատարել հողերի և անշարժ գույքի հաշվառում
Աշխատանքային գործընթացը	<p>1. Ունենալ հողերի և անշարժ գույքի կադաստրային քարտեզները</p> <p>2. Տարանջատել հողերը ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և սեփականության սուբյեկտների</p> <p>3. Կատարել հողերի և անշարժ գույքի հաշվառում կազմելով հողային հաշվեկշիռը</p>
Կատարման չափանիշներ	<p>ա. հողերի և անշարժ գույքի հաշվառման համար անհրաժեշտ փաստաթղթերի կազմը ամբողջական է,</p> <p>բ. հողերի տարանջատումը ճիշտ է կատարել,</p> <p>գ. հողերի տարանջատման հատկանիշների պահանջները պահպանված է,</p> <p>դ. հողային հաշվեկշռի համար պահանջվող տեղեկությունների կազմը ամբողջական է,</p> <p>ե. հողային հաշվեկշիռը ճիշտ է կազմել:</p>
<u>Խնդիրների բնագավառ 4.</u>	Կատարել հողերի և անշարժ գույքի գնահատում
Աշխատանքային գործընթացը	<p>1. Կատարել հողերի քանակական հաշվառում</p> <p>2. Խմբավորել հողերի քանակական հաշվառման տվյալները</p> <p>3. Կատարել հողերի որակական գնահատում</p> <p>4. Կատարել հողերի տնտեսական և արժեքային գնահատում</p> <p>5. Կատարել անշարժ գույքի կադաստրային գնահատում</p> <p>6. Կատարել անշարժ գույքի շուկայական գնահատում</p>
Կատարման չափանիշներ	<p>ա. հողերի և անշարժ գույքի գնահատման համար տվյալների</p>

	<p>նախապատրաստումն ամբողջական է,</p> <p>բ. հողերի և անշարժ գույքի գնահատման ընտրված մեթոդաբանությունը հիմնավոր է,</p> <p>գ. հողերի և անշարժ գույքի որակական գնահատումը ճիշտ է կատարել,</p> <p>դ. հողերի և անշարժ գույքի տնտեսական և արժեքային գնահատումը ճիշտ է կատարել,</p> <p>ե. հողերի և անշարժ գույքի կադաստրային գնահատումը ճիշտ է կատարել,</p> <p>զ. հողերի և անշարժ գույքի շուկայական գնահատումը ճիշտ է կատարել:</p>
<p>Խնդիրների բնագավառ 5. Կատարել հողերի և անշարժ գույքի գրանցում</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>1. Հողերի և անշարժ գույքի հողակադաստրային, իրավական փաստաթղթերի նախապատրաստում և հաստատում</p> <p>2. Հողերի և անշարժ գույքի գրանցում</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>ա. հողերի և անշարժ գույքի գրանցման ընթացակարգերը պահպանված է,</p> <p>բ. հողերի և անշարժ գույքի գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը ճիշտ ձևավորված է,</p> <p>գ. կատարված է հողերի և անշարժ գույքի գրանցում:</p>
<p>Խնդիրների բնագավառ 6. Մշակել և կիրառել հողերի արդյունավետ կառավարման նախագծեր</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>1. Կատարել հողերի փաստացի օգտագործման վիճակի համակողմանի վերլուծություն ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և սեփականության սուբյեկտների</p> <p>2. Կատարել հողերի արդյունավետ կառավարման կանխատեսում</p> <p>3. Մշակել հողերի արդյունավետ կառավարման նախագծեր</p> <p>4. Կիրառել հողերի արդյունավետ կառավարման նախագծերը բնության մեջ</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>ա. հողերի արդյունավետ կառավարման վերաբերյալ ցուցանիշների կազմը ամբողջական է,</p> <p>բ. ըստ կոնկրետ իրավիճակի հողերի կառավարման վերաբերյալ տեղեկությունների կազմը լրիվ ու ճիշտ է,</p> <p>գ. հողերի կառավարման արդյունավետության վերաբերյալ հաշվարկները մեթոդապես ճիշտ է կատարված,</p> <p>դ. արված են ճիշտ եզրահանգումներ,</p>

	ե. հողերի արդյունավետ կառավարման նպատակով մշակված նախագծերը հիմնավոր է:
Խնդիրների բնագավառ 7.	Կազմել փաստաթղթային փաթեթներ
Աշխատանքային գործընթացը	<ol style="list-style-type: none"> 1. Հողի և անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթղթերի հավաքագրում: 2. Հողի և անշարժ գույքի օտարման վերաբերյալ նախկինում տրված փաստաթղթերի հավաքագրում: 3. Տեղեկատվություն հողամասերի նկատմամբ իրավունքների մասին պետական կառավարման եվ տեղական ինքնակառավարման մարմինների տված փաստաթղթերից ծագող իրավունքների մասին: 4. Փաստաթղթային փաթեթների կազմում:
Կատարման չափանիշներ	<p>ա. ըստ իրավիճակների փաստաթղթերի ցանկը ամբողջական է և համապատասխանում է կոնկրետ իրավական ակտի պահանջներին,</p> <p>բ. փաստաթղթերի լրացման համար տեղեկությունները լրիվ են,</p> <p>գ. համապատասխան փաստաթղթերի վավերապայմանները առկա են,</p> <p>դ. փաստաթղթերի միավորները ճիշտ ձևավորված են,</p> <p>ե. ըստ իրավիճակի փաստաթղթերի փաթեթը առկա է.</p>
Խնդիրների բնագավառ 8.	Մշակել սխեմաներ և նախագծեր
Աշխատանքային գործընթացը	<ol style="list-style-type: none"> 1. Սխեմաների և նախագծերի տեխնիկական առաջադրանքի կազմում 2. Հատակագծաքարտեզագրական հիմքի ստեղծում 3. Սխեմաների և նախագծերի մշակում 4. Սխեմաների և նախագծերի հաստատում
Կատարման չափանիշներ	<p>ա. ըստ իրավիճակների սխեմաների և նախագծերի ցանկը ձևավորված է,</p> <p>բ. սխեմաներ և նախագծեր մշակելու համար առկա են հիմնավոր ելակետային տվյալներ,</p> <p>գ. սխեմաները և նախագծերը համապատասխանում են տեխնիկական առաջադրանքի պահանջներին,</p> <p>դ. ըստ գործող կարգի սխեմաները և նախագծերը ներկայացված է հաստատման:</p>
Խնդիրների բնագավառ 9.	Կազմել հողային հաշվեկշիռ
Աշխատանքային գործընթացը	<ol style="list-style-type: none"> 1. Հողօգտագործողների և հողասեփականատերերի սահմանների ճշգրտում 2. Հողերի հաշվառում ըստ նպատակային նշանակության 3. Հողերի հաշվառում ըստ գործառնական նշանակության

	<p>4. Հողերի հաշվառում ըստ հողատեսքերի</p> <p>5. Հողերի հաշվառում ըստ նպատակային սեփականության սուբյեկտների</p> <p>6. Ոռոգելի հողերի հաշվառում</p> <p>7. Հողային հաշվեկշռի կազմում</p>
Կատարման չափանիշներ	<p>ա. ըստ իրավիճակի հողային հաշվեկշռի նպատակը հստակ ձևակերպված է,</p> <p>բ. հողային հաշվեկշռը կազմելու համար նախնական տեղեկությունները ճիշտ խմբավորված է,</p> <p>գ. հողային հաշվեկշռը ճիշտ է կազմված</p>
Խնդիրների բնագավառ 10. Իրականացնել հողերի մոնիթորինգ և հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործման կանխատեսում	
Աշխատանքային գործընթացը	<p>1. Հողերի մոնիթորինգի օբյեկտների վերջաբերյալ տեղեկատվության հավաքագրում</p> <p>2. Հողերի մոնիթորինգի խնդիրների ձևակերպում</p> <p>3. Հողերի մոնիթորինգի մեթոդների ընտրություն</p> <p>4. Հողերի մոնիթորինգի իրականացում</p> <p>5. Հողային ռեսուրսների հեռանկարային օգտագործման կանխատեսում</p>
Կատարման չափանիշներ	<p>ա. հողերի մոնիթորինգի նպատակը ճիշտ մեկնաբանում է,</p> <p>բ. հողերի մոնիթորինգի մեթոդաբանությունը հիմնավոր է,</p> <p>գ. հողերի մոնիթորինգի համար փաստաթղթային ապահովվածությունն առկա է,</p> <p>դ. մոնիթորինգի արդյունքում ստացված տեղեկությունները ճիշտ են,</p> <p>ե. մոնիթորինգի արդյունքների ամփոփումը ճիշտ է կատարվել,</p> <p>զ. մոնիթորինգի արդյունքների հիման վրա կատարված է ճիշտ եզրահանգումներ:</p>
III. Պատասխանատվությունը	<p>Հողաշինարարը պատասխանատու է հողաշինարարական աշխատանքների կազմակերպման, գեոդեզիական աշխատանքների իրականացման, հողային հարաբերությունների կարգավորման, միասնական պետական հողային կադաստրի վարման, հողային ռեսուրսների պահպանման, հողերի բարելավման միջոցառումների համակարգման և տարեկան հողային հաշվեկշիռ կազմելու հարցերում:</p>
IV. Լեզուները	<p>հայերեն- գերազանց</p> <p>ռուսաց լեզու- բավարար</p> <p>այլ օտար լեզու- բավարար</p>

<p>V. Համակարգիչը</p>	<p>ա. MS Word - բավարար</p> <p>բ. MS Excel - բավարար</p> <p>գ. Internet Explorer - բավարար</p> <p>դ. Autocad - բավարար</p>
<p>VI. Գիտելիքները</p>	<ol style="list-style-type: none"> 1. Գյուղատնտեսական արդյունաբերական համալիրի զարգացման հարցերի վերաբերյալ օրենսդրության հիմունքները և գործող նորմատիվ իրավական փաստաթղթերը, 2. գյուղատնտեսական արտադրության կազմակերպման հիմունքները և կառավարման ժամանակակից ձևերը, 3. հողօգտագործման, հողաշինարարության և հողային կադաստրի զարգացման հիմնական ուղղությունները, 4. հողերի արդյունավետ օգտագործման հանդեպ պահանջները, հողային աշխատանքների կատարման տեխնոլոգիան, 5. հողա-կադաստրային մատյանի վարման կարգը, տեղագրական և օդալուսանկարահանման գործիքների ու սարքերի կառուցվածքը, 6. միջտնտեսական և ներտնտեսական հողաշինարարության պահպանումն ու կազմակերպումը, 7. վերերկրյա նկարահանումների աշխատանքների կատարման կարգը, 8. օդալուսանկարահանումների փաստաթղթերի վրա մակերևութապատկերի (ռելիեֆի) պատկերման եղանակները, 9. հողերի յուրացման և լավացման միջոցները, 10. հակաէռոզիոն միջոցառումների համակարգերը, 11. հողային կոդեքսները, շրջակա բնական միջավայրի պաշտպանության մասին օրենսդրությունը, 12. հողաշինարարական տեղեկատվության ավտոմատացված մշակման միջոցները, աշխատանքի անվտանգության կանոնները: 13. գծագրերի և սխեմաների կառուցման հիմնական կանոնները, 14. տարածական մարմինների գրաֆիկական պատկերման եղանակները, 15. չափագիտության, ստանդարտացման և հավաստագրման մասին հիմնական հասկացությունները և սահմանումները, 16. հողերի ծագումը, կազմությունը, հատկությունները, դասակարգումը, դրանց օգտագործումը գյուղատնտեսական նպատակներով, 17. տեղագրական աշխատանքների և քարտեզագրման հիմնական եղանակները, 18. աշխատանքային նախագծերի կազմման և հիմնավորման մեթոդաբանությունը՝ հողային պաշարների օգտագործումն ու պահպանումը, հողի փխրեցումը և վերափխրեցումը բարելավելու նպատակով, 19. նախագծահետազոտական աշխատանքների կատարման տեխնոլոգիաները, 20. հիմնական լուսանկարաչափական սարքերի աշխատանքի մեթոդաբանությունը և տեսատեղեկատվության, օդանկարահանումների ու տիեզերական նկարահանումների վերծանման տեխնոլոգիաները:
<p>VII. Կարողությունները և հմտությունները</p>	<ol style="list-style-type: none"> 1. օգտագործել տեղագրական (գեոդեզիական) գործիքները, սարքերը և հարմարանքները, 2. մշակված նախագծերը վերածել իրականության, կատարել անհրաժեշտ նկարահանումներ ժամանակակից միջոցներով, 3. կազմել և ձևավորել լուսանկարչական սխեմաներ ու լուսանկարչական պլաններ, 4. կատարել օդային նկարահանումների վերծանում,

	<ol style="list-style-type: none"> 5. օդային լուսանկարահանումների փաստաթղթերի վրա պատկերել մակերևութապատկերը (ռելիեֆ)՝ հողաշինարարական նպատակների համար, 6. հաշվել հողատարածությունը և կազմել պարզաբանագրեր, 7. կատարել հողաշինարարական տեղեկատվության ավտոմատացված մշակում ժամանակակից եղանակներով, 8. վարել հողահաշվառման փաստաթղթերը, 9. ապահովել հողաշինարարական աշխատանքների անվտանգ անցկացումը և իրականացնել աշխատանքի անվտանգության կանոնների պահպանության վերահսկումը, 10. ձեռնարկել շրջակա միջավայրի պաշտպանության ապահովման միջոցառումներ, 11. ճիշտ կազմակերպել հողերի արդյունավետ օգտագործման և դրանց պաշտպանության աշխատանքները, 12. վերահսկել հողային օրենսդրության պահպանումը: 13. ձևակերպել նախագծա-կոնստրուկտորական, տեխնոլոգիական և այլ տեխնիկական փաստաթղթեր՝ գործող նորմատիվային բազային համապատասխան, 14. կարողանալ կիրառել որակի գնահատման համակարգի փաստաթղթեր, 15. որոշել հողերի տեսակները՝ ըստ ձևաբանական հատկանիշների, 16. ընտրել հողաբարելավման և վերափխրեցման եղանակները, 17. տարբերել գյուղատնտեսական մշակաբույսերը, կենդանիների տեսակները և մեքենայացման միջոցները: 18. կիրառել հողի իրավունքի հիմնական օրենքները և հողային կադաստրի հիմնական դրույթները, 19. տեսատեղեկատվության, օդանկարահանումների ու տիեզերական նկարահանումների վերծանված նյութերը օգտագործել գյուղատնտեսական նշանակության հողերի հետազոտման նպատակների համար:
<p>VIII. Անձնային հատկանիշներ</p>	<p>Պարտաճանաչ, կարգապահ, շփվող, նախաձեռնող, մաքրասեր, ընկալունակ, թիմում աշխատելու պատրաստ, ընկերասեր, համբերատար:</p>